ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2014 թվականի N 297-Ա

Ժ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 2-ի N 32-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 6.2-րդ կետը՝ **որոշում եմ.**

1. ***Ժորա Գրիգորյանին*** 2014 թվականի հուլիսի 10-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արգելի առողջության կենտրոն>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2009 թվականի հուլիսի 10-ին կնքված N 85 աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ ***2014 թվականի հունիսի 27-ի N 01/21.2/2183-14 գրավոր ծանուցումը***:

2. Մինչև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով (տնօրենի թափուր պաշտոնում) պաշտոնի նշանակումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արգելի առողջության կենտրոն>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար նշանակել ընկերության ընտանեկան բժիշկ ***Ելիզավետա Արզումանյանին***:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Արգելի առողջության կենտրոն>> պետական փակ բաժնետիրական ընկերության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի հուլիսի 10
ք. Հրազդան